ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«-----» սեպտեմբերի 2013թ. **N –Ա**

ՈՐՈՇՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԵՎ ԼԱՏՎԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՌԻԳԱ ՔԱՂԱՔԻ ՄԻՋԵՎ ԵՂԲԱՅՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ» ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետին համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Հաստատել Ռիգա քաղաքում ստորագրված «Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի և Լատվիայի Հանրապետության Ռիգա քաղաքի միջև եղբայրացման մասին համաձայնագիրը»՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԵՎ ԼԱՏՎԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՌԻԳԱ ՔԱՂԱՔԻ ՄԻՋԵՎ ԵՂԲԱՅՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ» ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ելնելով Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանի և Լատվիայի Հանրապետության մայրաքաղաք Ռիգայի միջև երկկողմ համագործակցության հաստատման անհրաժեշտությունից և նպատակ ունենալով զարգացնել երկկողմ կապերը, տարբեր ոլորտներում համագործակցության ծավալումը, փորձի փոխանակման, տարբեր ծրագրերի և նախագծերի իրականացումը, անհրաժեշտ եմ համարում 2013թ. հուլիսի 5-ին Ռիգա քաղաքում ստորագրված «Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի և Լատվիայի Հանրապետության Ռիգա քաղաքի միջև եղբայրացման մասին համաձայնագրի» հաստատումը Երևան քաղաքի ավագանու կողմից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԵՎ ԼԱՏՎԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՌԻԳԱ ՔԱՂԱՔԻ ՄԻՋԵՎ ԵՂԲԱՅՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ» ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

««Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի և Լատվիայի Հանրապետության Ռիգա քաղաքի միջև եղբայրացման մասին համաձայնագիրը» հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԵՎ ԼԱՏՎԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՌԻԳԱ ՔԱՂԱՔԻ ՄԻՋԵՎ ԵՂԲԱՅՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ» ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու ««Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի և Լատվիայի Հանրապետության Ռիգա քաղաքի միջև եղբայրացման մասին համաձայնագիրը» հաստատելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի 2013 թվականի բյուջեում եկամուտների և ծախսերի փոփոխություն չի առաջանա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ
ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

RĪGAS DOME

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԵՎ ԼԱՏՎԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՌԻԳԱ ՔԱՂԱՔԻ ՄԻՋԵՎ ԵՂԲԱՅՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքը և Լատվիայի Հանրապետության Ռիգա քաղաքը /այսուհետ՝ Կողմեր/

Նպատակ ունենալով ամրապնդել և զարգացնել բարեկամական հարաբերությունները երկու քաղաքների միջև,

Ձգտելով զարգացնել համագործակցությունը երկու քաղաքների միջև տարբեր բնագավառներում,

Ելնելով բարեկամության, հավասարության և փոխշահավետության սկզբունքներից՝

Համաձայնվեցին երկու քաղաքների միջև հաստատել եղբայրական հարաբերություններ և պայմանավորվեցին ներքոհիշյալի վերաբերյալ.

ՀՈԴՎԱԾ 1

Կողմերը համագործակցում են՝

- տեղական ինքնակառավարման, փորձի և մասնագետների փոխանակման, քաղաքային ծառայությունների կառավարման, ինչպես նաև քաղաքներում երթևեկության և փոխադրումների կազմակերպման,
- մշտական կապի հաստատման միջոցով՝ մշակույթի, սպորտի, կրթության և զբոսաշրջության,
- բնապահպանության,
- սոցիալական ապահովության և առողջապահության,
- գործարար շրջանակների ներկայացուցիչների փոխայցելություններ, ինչպես նաև ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող այլ ոլորտներում:

ՀՈԴՎԱԾ 2

Կողմերը նպաստում են երկու քաղաքների տնտեսության ոլորտում գործող կազմակերպությունների և անհատների միջև կապերի ամրապնդմանն ու զարգացմանը ուղղված նախաձեռնություններին:

ՀՈԴՎԱԾ 3

Կողմերը փոխանակում են անհրաժեշտ նյութեր և տեղեկատվություն՝ համագործակցությունը զարգացնելու նպատակով:

ՀՈԴՎԱԾ 4

Երկու քաղաքների միջև համագործակցությունը ծավալվում է ներքին օրենսդրության համաձայն, Կողմերի իրավասության սահմաններում:

ՀՈԴՎԱԾ 5

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում այն պահից, երբ Կողմերն ստանում են Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներքին գործընթացների կատարման մասին վերջին գրավոր ծանուցումը և գործում է այնքան ժամանակ, քանի դեռ Կողմերից մեկը մյուս Կողմին վեց ամիս առաջ գրավոր չտեղեկացնի Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր որոշման մասին:

Ստորագրված է քաղաք Ռիգայում, 2013թ. հուլիսի 5-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և լատվիերեն լեզուներով, ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ	ՌԻԳԱՅԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
ՏԱՐՈՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ	ՆԻԼ ՈՒՇԱԿՈՎ
---	---

RĪGAS DOME

ԵՐԵՎԱՆԻ
ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

VIENOŠANĀS PAR SADARBĪBU STARP RĪGAS PILSĒTAS PAŠVALDĪBU (LATVIJAS REPUBLIKA) UN EREVĀNAS PAŠVALDĪBU (ARMĒNIJAS REPUBLIKA)

Rīgas pilsētas pašvaldība (Latvijas Republika) un Erevānas pašvaldība (Armēnijas Republika), turpmāk „Puses",

Vēlēdamās turpmāk veicināt ciešas draudzīgas attiecības, kas pastāv starp abām pilsētām,

Cenšoties attīstīt sadarbību starp abām pilsētām dažādās jomās,

Balstoties uz draudzības, vienlīdzības un abpusējā labuma principiem,

Ir vienojušās nodibināt sadraudzības pilsētu attiecības starp abām pilsētām un nolemj:

1. PANTS

Puses sadarbosies šādās jomās:

- vietējo pašvaldību pieredzes un speciālistu apmaiņa, pašvaldību pakalpojumu un īpašumu administrēšana, kā arī pilsētas satiksmes un transporta organizēšana;
- kultūra, sports, izglītība un tūrisms, izmantojot pastāvošās attiecības;
- vides aizsardzība;
- sociālā aprūpe un veselība;
- uzņēmējdarbības pārstāvju savstarpējās vizītes,

kā arī citās jomās, kas skar kopīgās intereses.

2. PANTS

Puses veicinās iniciatīvas, kas vērstas uz attīstību un ekonomisko saišu nostiprināšanu starp abu pilsētu biznesa organizācijām un privātpersonām.

3. PANTS

Lai attīstītu sadarbību, Puses apmainīsies ar nepieciešamajiem materiāliem un informāciju.

4. PANTS

Abu pilsētu sadarbība tiks veikta saskaņā ar Pušu tiesību aktiem un Pušu kompetenču ietvaros.

5. PANTS

Vienošanās stājas spēkā ar tā parakstīšanas brīdi. Vienošanās darbojas, līdz viena no Pusēm 6 mēnešus iepriekš rakstiski informē par lēmumu izbeigt šo vienošanos.

Parakstīts Rīgā 2013.gada 5.jūlijā divos eksemplāros latviešu un armēņu valodā.

RĪGAS DOMES PRIEKŠSĒDĒTĀJS	**EREVĀNAS MĒRS**
NILS UŠAKOVS	**TARONS MARGARJANS**